

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻՈՒԶԱ ՇԱՐԻՖԻ ՅԱԶԴԻ

ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԱԽԱԴԻՑԱԼՆԵՐԸ

ԻԲ. 00.03 – «Միջին մակարդակի տեւություններ, սոցիալական կառույցներ, սոցիալական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝

սոցիոլոգիական գիտությունների դոկտոր
Մ. Բ. Զապլավսկայա

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

սոցիոլոգիական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ա. Կ. Մահակյան**

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Յ. Գ. Մելքումյան**

Առաջատար կազմակերպություն՝

**Թեհրանի պետական Ֆարհանգյան
համալսարան**


Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2015թ. նոյեմ-
բերի 6-ին՝ ժ. 15⁰⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈՀ-ի Թ. 00.13 մասնագիտական
խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ԵՊՀ, Արբվյան 52ա, Երևան 0025, ՀՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. հոկտեմբերի 6-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
փիլիսոփայական գիտությունների թեկնածու,
դոցենտ



Գ. Ա. Սաղոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է արդիականության սոցիոլոգիական իմաստավորմանը, տեսական տարբեր մոտեցումների կիրառման միջոցով արդիականացման բազմակողմանի քննությանը, արդիականացման գործառույթների, առանցքային բաղադրիչների, պայմանավորող գործոնների բացահայտմանը և այդ լույսի ներքո իրանական հասարակության մեջ արդիականացման սոցիալական նախադրյալների վերհանմանը: Իրանական հասարակության համատեքստում փորձ է արվել բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք նշանակալի ազդեցություն ունեն արդիականացման գործընթացի վրա, առանձնացվել և վերլուծվել են այն սոցիալական պայմանները, որոնք խոչընդոտում կամ խթանում են իրանական հասարակության արդիականացումը: Այդ ընթացքում արդիականացումն իր գործոններով ուսումնասիրվել է երեք հիմնական մակարդակներում. *միկրոմակարդակում*, ուր երևույթն ուսումնասիրվում է անձնային ընկալումների, գործունեության, դրա սոցիալական հետևանքների, ինչպես նաև դրա հիմքում ընկած շարժառիթների ու արժեքային կողմնորոշումների տեսանկյունից, հասարակության *միջին մակարդակում*, ուր երևույթը դիտարկվում է սոցիալական խմբերի, ինստիտուցիոնալ կառուցվածքների տիրույթում: Ի վերջո, արդիականացումը քննվել է հասարակության *մակրոմակարդակում*, որտեղ ուսումնասիրվում են արդիականացման գործընթացով պայմանավորված՝ հասարակական համընդհանուր *կառուցվածքային* և *գործառնական* փոփոխությունները:

Թեմայի արդիականությունն ու հրատապությունը: Արդիականացման հետ կապված հիմնախնդիրները վերջին դարաշրջանում լայն քննարկումների թեմա են հասարակական գիտությունների, քաղաքականության, տնտեսության, մշակույթի և այլ ոլորտներում: Հասարակական-քաղաքական արդի գործընթացները և դրանց հեռանկարը ակտիվ քննարկումների առարկա են դարձել տարբեր հասարակական միջավայրերում, ինչպես նաև գիտական հանրության շրջանում տարբեր մասնագետների կողմից: Օրակարգային են այն հարցերը, թե որքանով Արևելքի երկրներում հնարավոր կլինի ձևավորել ժողովրդավարություն, տնտեսական և սոցիալական այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն հասարակության զարգացումը և ընդունելի լինեն հասարակության համար: Ի վերջո, զարգացման ի՞նչ մոդելներ կընտրեն այդ երկրները: Առկա տեսական մոտեցումների համաձայն՝ Արևելքում պայքար է ծավալվում հիմնականում երեք՝ արևմտյան, իսլամիստական և թուրքական մոդելների շուրջ: Չի բացառվում, որ տեսանելի ապագայում ի հայտ կգան նաև քաղաքական այլ հայեցակարգեր:

Արևելքի երկրների թվում է նաև Իրանի Իսլամական Հանրապետությունը: Այստեղ ժամանակի ընթացքում բյուրեղացավ զարգացման երրորդ կամ իսլամական ուղու տեսությունը, որին էականորեն խթանեց Իրանի՝ 1979-ի իսլամա-

կան հեղափոխությունը: Այս ուղու կողմնակիցները, համարելով, որ Միջին Արևելքում ձախողվել են թե՛ սոցիալիստական և թե՛ կապիտալիստական մոդելները, անհրաժեշտ են համարում ընթանալ այլընտրանքային ճանապարհով: Այս առումով իրանական հասարակության արդիականացման սոցիալական նախադրյալների վերհանմանն ուղղված սույն հետազոտության այժմեականությունն առաջին հերթին այն է, որ բացահայտելով և քննարկման դաշտ բերելով արդիականացման վրա ազդող անհայտ ու թաքնված գործոնները՝ հիմքեր են ստեղծվում հանրության բնութագիրն անորոշություններից ձեռքագատելու համար: Մյուս կողմից՝ 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ Իրանի պատմական զարգացումը զուգորդվել է իրար հաջորդած հեղափոխական ալիքներով ու կոնֆլիկտային իրողություններով (այս թվում՝ նաև Իրան-իրաքյան պատերազմը), որոնց միջև ծագած խզումները հասարակական դաշտում առաջ են բերել որոշ անջրպետներ. դրանց դեռևս չհաղթահարված հետևանքներն Իրանում շարունակում են արգելք հանդիսանալ արդիականացման ճանապարհին: Այս ամենի կողքին ժամանակակից Իրանում, բնակչության աճով պայմանավորված, ժողովրդագրական ճնշման ներքո առաջանում են նաև արդիականացման հետ կապված այնպիսի անհրաժեշտություններ, ինչպիսիք են տնտեսության արդիականացումը, շուկայական մեխանիզմների օգտագործման արդյունավետությունն ու կատարելագործումը: Տնտեսական համակարգի այս անցումայնությունը ևս հրատապ է դարձնում արդիականացման իրանական տեսակի համակողմանի ուսումնասիրությունը, վերջինիս ուղղորդվածությունն ու պատճառային կապը տարբեր գործոնների հետ:

Հետազոտության կարևորությունը նաև այն է, որ այն արդիականացման նախադրյալների ուսումնասիրության հարցում աղերսվում է դեռևս անհրաժեշտ ուշադրության չարժանացած հասարակական այնպիսի շերտերի հետ, ինչպիսիք են բարձր կրթական մակարդակ մասնագիտական որակավորում ունեցող կանայք և փորձում է նրանց ակտիվության և հասարակական դերակատարման տեսանկյունից դիտարկել արդիականացման նախապայմանները: Արդիականության գործընթացի վրա ազդող վերոնշյալ գործոնների ուսումնասիրությունը հնարավորություն կստեղծի հասարակության համար առավել հեշտությամբ ադապտացվել անցումային իրականության փոփոխվող պայմաններին, առավել նպաստավոր կդարձնի իրանական հասարակության փոխազդեցությունը ավանդույթների ու ավանդակալ արժեքների հետ, իրազեկվածության տեսանկյունից առավել բազմաշերտ և համակողմանի տեղեկատվություն կապահովի ներկայիս սերնդի համար, հնարավորություն կընձեռի ծանոթանալու արդիականացման տարբեր չափումների և մակարդակների հետ, առավել բազմակողմանի պատկերացում կազմելու արդիականացման հիմնական մեխանիզմների ու օրինաչափությունների յուրահատկությունների մասին՝ կապված կոնկրետ հասարակական համատեքստի հետ:

Հիմնահարցի գիտական մշակվածության աստիճանը: Առավել բարվոք հասարակություն ունենալու մեխանիզմների փնտրտուքը փիլիսոփայական մտորումների և մշակումների առարկա է հանդիսացել դեռևս անտիկ ժամանակներում: Ինչ-որ իմաստով արդիականացման ժամանակակից ըմբռումները ևս իրենց հիմքում կրում են առավել բարեկեցիկ հասարակություն ունենալու գաղափարը: Մակայն արդիականացման ժամանակակից տեսական հայեցակարգերն ի հայտ են գալիս 20-րդ դարավերջին և հաջորդ դարասկզբին՝ աշխարհում տեղի ունեցող արմատական, շրջադարձային փոխակերպումներին զուգընթաց: Համաշխարհային փոխակերպումները հայտնվում են տնտեսագետների, սոցիոլոգների, իրավագետների, հոգեբանների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում՝ անսպառ նյութ դառնալով տարաբնույթ վերլուծությունների ու մեկնաբանումների համար:

Սոցիոլոգիական մոտեցումների շրջանակերում համաշխարհային գործընթացները մեկնաբանող տեսական մշակումներում ուշադրություն է դարձվում Արևմուտքի և ոչ արևմուտքի զարգացման անհամաչափությանը: Ընդ որում, Արևմուտքը նույնականացվում է ժամանակակցի, իսկ ոչ արևմուտքը՝ ավանդականի հետ: Այսօրինակ սահմանազատման սկիզբը դրել է Մ. Վեբերը. նա Արևմուտքը համարում էր յուրահատուկ երևույթ, որը նույն է, ինչ արդիականությունը¹:

Ընդհանուր առմամբ արդիականացման դասական ըմբռումներում, որպես արդիականացման հիմնական մեխանիզմ, դիտվում է արդյունաբերականացումը, ավանդականի հետ կապերի խզումը և արևմտյան փորձի հետևողական ընդօրինակումը: Հետագա տեսական մոտեցումներում, սակայն, ավելի են շեշտադրվում գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալ-մշակութային զարգացման հիմնահարցերը:

Արդիականացման գործընթացի շուրջ գիտական մշակումներն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ: Այս առնչությամբ հարկ է առանձնացել ազատական տեսաբանների և պահպանողականների բանավեճը: Եթե ազատականները (Ռ. Դալ, Գ. Ալմոնդ, Լ. Փայ) արդիականացման հիմքում տեսնում էին ժողովրդավարական արժեքների տարածումը, միջին խավի ձևավորումը, հասարակության կրթվածության աստիճանի բարձրացումը, պետության գաղափարախոսական ազդեցության նվազեցումը և այլն, ապա պահպանողական մտածողներից Հանտիգտոնը, օրինակ, արդիականացումը պայմանավորում էր կենտրոնացված իշխանության, ավտորիտար վարչակարգի առկայությամբ, ինչը նա համարում էր արդիականացման համար անհրաժեշտ քաղաքական կայունության նախապայման: Արդիականության ոչ դասական տեսաբանների աշխատություններում արդիականության ուսումնասիրությունն ընդհանուր հա-

¹St' u **Breen K.**, Under Weber's shadow (Modernity, Subjectivity and Politics in Habermas, Arendt and MacIntyre), StanfordUniversity press, 2012, P.67

սարակական հարթությունից տեխափոխվում է ավելի մասնավոր հարթություն, ուր գործընթացի ուսումնասիրման մեկնակետն անձի հոգեբանության հարթությունն է (Ք. Մքքլեյլանդ և Ե. Հայզեն): Արդիականացման ոչ դասական տեսություններն աչքի են ընկնում տնտեսական դետերմինիզմի քննադատությամբ: Այս տիրույթում հիշատակվում են Շարմայի, Գիդդենսի մտտեցումները, որոնք, որպես գործընթացի հիմք, տեսնում են ինստիտուցիոնալ այլ հարթություններ և կառուցվածքներ: Մեկ այլ տեսաբան՝ Կ. Ա. Վոնգը, քննադատելով արդիականության «վեստերնացում» մոդելի կողմնակիցներին, գտնում է, որ յուրաքանչյուր համայնք իր ինստիտուցիոնալ տարրերով գործադրում է անհրաժեշտ ինտեգրացիա ապահովելու սեփական մեթոդը:

Ինչ վերաբերում է իրանական արդիականացմանը, ապա այստեղ ևս հիմնախնդրի շուրջ առկա են տեսական տարբեր մտտեցումներ: Մասնավորապես ուշաբժան է Դ. Նամինի հայեցակարգը: Վերջինս իրանական արդիականության գործընթացում առանձնացնում է երեք ասպեկտ. առաջինը քաղաքական արդիականությունն է, երկրորդը՝ մշակութայինը, և երրորդը՝ տնտեսականը:

Մեկ այլ տեսաբան՝ Թեհրանի համալսարանի սոցիոլոգ, պրոֆեսոր Թադի Ազադը, գտնում է, որ իրանական արդիականությունն արդյունք է սոցիալական երեք հիմքերի փոխառնչության՝ կրոն, քաղաքականություն և ընտանիք:

Այսպիսով, չնայած հիմնախնդրի շուրջ ձևավորված գիտական տարաբնույթ մշակումների, առաջարկված տեսական մոդելների և մեթոդաբանական մտտեցումների, համաշխարհային ժամանակակից վերափոխումների հետ համընթաց, արդիականացումը որպես գործընթաց, այնուամենայնիվ շարունակում է հանդիսանալ տեսական նորանոր իմաստավորումների ու մեկնաբանությունների առարկա:

Ատենախոսության նպատակն է բնութագրել արդիականացման գործընթացն իրանական հասարակության մեջ, վեր հանել արդիականացման սոցիալական հիմնական նախադրյալները և բնութագրել այն գործոնները, որոնք անմիջական ազդեցություն ունեն սույն գործընթացի վրա:

Ատենախոսության նպատակը ենթադրում է հետազոտական հետևյալ խնդիրների առաջադրումը.

1. Վեր հանել արդիականացման նախադրյալները իրանական հասարակության երեք մակարդակներում՝ մակրո, մեզո և միկրո:
- 1.1. Պարզել պետության դերակատարումը իրանական հասարակության արդիականացման գործընթացում:
- 1.2. Բացահայտել սոցիալական շարժումների և բարեփոխումների փոխադարձ կապն ու փոխազդեցությունը իրանական հասարակության արդիականացման պայմաններում:
- 1.3. Վեր հանել պատմական-սոցիալական պայմանների առանձնահատկությունները՝ կապված իրանական հասարակության արդիականացման գործ-

ընթացի հետ:

1.4. Վեր հանել հասարակական ինստիտուտների դերը իրանական հասարակության արդիականացման գործընթացում:

1.5. Նկարագրել իրանական հասարակության մեջ տարածված գաղափարները՝ կապված արդիականության հետ, և իրանական հասարակության այն սոցիալական խմբերը, որոնք արդիականացման գործընթացի հիմնական կրողներն են:

2. Բացահայտել իրանական հասարակության արդիականացման տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում առկա նախադրյալները:

3. Վեր հանել հասարակության միկրոմակարդակում արդիականացման ազենտ հանդիսացող խմբերի ընդհանուր բնութագիրը:

3.1. Պարզել՝ արդիականացման գործընթացներում բնակավայրի գործունը/քաղաքային կամ գյուղական ծագումը/ որքանով է ազդեցիկ:

3.2. Պարզել, թե սոցիալ-տնտեսական կարգավիճակն ինչպես է ներագրում արդիականացման ընդունման վրա:

3.3. Պարզել գանգվածային լրատվամիջոցների հասանելիության մակարդակը և արդիականացման ընդունման գործընթացում դրանց դերակատարումը:

3.4. Պարզել կրթամակարդակի ազդեցությունն արդիականացման մակարդակի, ինչպես նաև արդիականացման փոխանցմանը նպաստելու վրա:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Սույն ատենախոսության շրջանակներում իրանական հասարակության մեջ արդիականացման գործընթացների վերաբերյալ եզրահանգումները կատարվել են համալիր սոցիոլոգիական հետազոտությունից ստացված տվյալների վերլուծության հիման վրա, իրականացվել է նաև վիճակագրական տվյալների բազմաչափ վերլուծություն: Հետազոտության ընթացքում առավել համակողմանի տեղեկատվություն ստանալու նպատակով կիրառվել են թե՛ քանակական և թե՛ որակական մի շարք մեթոդներ, որոնցից են փաստաթղթերի ավանդական վերլուծությունը, տվյալների երկրորդային վերլուծությունը, կիսաձևայնացված հարցազրույցը:

Փաստաթղթերն ընտրվել են ԻԻՀ-ի կառավարության արխիվներից, Խորհրդարանի հետազոտական կենտրոնից, փաստաթղթերի կենտրոններից և գրապահոցներից: Տեղեկատվության հավաքման փուլում հեղինակն օգտագործել է ՉԼՄ նյութերը, հատկապես հանրության շրջանում առավել մեծ լսարան ունեցող հրապարակումները, գրադարանային նյութեր, գիտական կայքէջեր, հոդվածներ, հետազոտական կենտրոնների ինդեքսներ, պաշտոնական փաստաթղթեր, պետական արխիվներ, մամուլում և պարբերականներում տեղ գտած հրապարակումներ և հարցազրույցներ:

Հետազոտության ընթացքում իրականացվել է նաև ԻԻՀ-ում անցկացված

արդիականության գործընթացների հետ առնչվող հետազոտական մի շարք սովյալների երկրորդային վերլուծություն: Դրանց թվում է 2010-2012 թվականներին Մաշադ, Սպահան, Ռաշտ, Բանդարաբաս, Քերմանշահ, Թավրիզ քաղաքներում 19-45 տարիքային խմբերի կանանց և տղամարդկանց շրջանում անցկացված կրթության և քաղաքականության ոլորտներում համաշխարհայնացման գործընթացի դրական և բացասական կողմերի վերաբերյալ հետազոտությունը: Այնուհետև Իրանի Քերման քաղաքում 2012-ին իրականացվել է համեմատական սոցիոլոգիական հետազոտություն, ուր ուսումնասիրվում էր աշխատող ու տնային տնտեսությամբ զբաղվող կանանց և նրանց ամուսինների կյանքից բավարարվածությունը: Իրանական ընտանիքներում կանանց կարգավիճակի, իշխանության բաշխման և ընտանիքում որոշումներ կայացնելու հարցում 2012-ին կանանց ակտիվությանը նվիրված հարցում է կատարվել Սանանդազ քաղաքի 440 կանանց շրջանում: Իրանում նույն թվականին կիսաձևայնացված հարցաթերթավորման օգնությամբ շուրջ 2250 կանանց շրջանում իրականացվել է կանանց սոցիալական ակտիվության ուսումնասիրություն:

Տեղեկատվության հավաքման շրջանակներում հեղինակի կողմից իրականացվել են նաև կիսաձևայնացված հարցազրույցներ բնակչության թիրախային խմբերի շրջանում, որտեղ ուսումնասիրման գլխավոր համախմբություն են հանդիսացել Թեհրանի համալսարաններում սովորող իգական սեռի երիտասարդ ներկայացուցիչները:

Ատենախոսության հետազոտական վարկածները

1. Իրանական արդիականացումը տեղի է ունենում ինքնատիպ մոդելի շրջանակներում, որն իր հիմնական բնութագրերով ու գործընթացային առանձնահատկություններով զգալիորեն տարբերվում է արդիականացման դասական մոդելներից:

2. Իրանական արդիականացումն օրգանական բնույթ է կրում, և նրա նախադրյալները հիմնականում դրսևորվում են միկրո մակարդակում՝ արդիականացման ազենտ հանդիսացող հատուկ սոցիալական խմբերի ներկայացուցիչների միջոցով:

3. Իրանական հասարակության մեջ արդիականացման հիմնական ազենտ են հանդիսանում բարձրագույն կրթություն ստացող երիտասարդ կանայք:

Ատենախոսության գիտական նորույթը: Իրանական հասարակության արդիականացման նախադրյալների հետազոտության մեջ իրանուհիների դերակատարման դիտարկումն ինքնին նորույթի տարր է մտցնում այս ոլորտի սոցիոլոգիական հետազոտություններում:

Ատենախոսության արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ դրույթներում.

Ատենախոսը ցույց է տվել, որ իրանական հասարակության մեջ արդիակա-նացման գործընթացներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս պնդելու, որ գոյություն ունի առանձնահատուկ, այսպես կոչված, «իրանական արդիականացման մոդելը», որը տարբերվում է արևմտյան արդի-ականացման ձևերից: Հեղինակը հիմնավորել է, որ այն ազգային յուրօրինակ մոդել է, որը դրսևորվում է որպես տեղային արդիականացում, սակայն ունի արևմտյան արդիականացման որոշակի արտահայտություն և դրսևորման տար-րեր:

Հեղինակը մատնանշել է իրանական արդիականացման մոդելի մի շարք ա-ռանձնահատկություններ՝ ցույց տալով մակրո մակարդակում արդիականաց-ման սոցիալական նախադրյալների ֆրագմենտարությունը (մասնատվածութ-յունը) և համակարգվածության բացակայությունը:

Ատենախոսը հիմնավորել է, որ իրանական արդիականացումը պատկա-նում է օրգանական արդիականացման դասին և իրականացվում է հիմնակա-նում միկրո մակարդակում՝ արդիականացման որոշակի ազենտների միջոցով՝ ի տարբերություն մեզո և միկրո մակարդակների: Հեղինակը հիմնավորել է, որ իրանական հասարակության մեջ արդիականացման հիմնական ազենտները բարձրագույն կրթություն ստացող երիտասարդ կանայք են: Հեղինակը ցույց է տվել կանանց զգալի դերակատարումը Իրանում արդիականացմանն ուղղված քայլերի և հասարակական տեղաշարժերի գործընթացում:

Հեղինակը վերհանել է մի շարք գործոններ, որոնք նշանակալի են Իրանում արդիականացման գործընթացների առաջընթացի համար:

Հեղինակն առաջարկել է իրանական հասարակական համատեքստին ա-դապտացված արդիականացման մակարդակի չափման մոդել, որի հիմքում ըն-կած են հետևյալ բնութագրիչները՝ կողմնորոշումը դեպի առաջադիմություն, գիտակցականությունը, անկախությունը, էգալիտարությունը, ժողովրդավարու-թյունը, համընդհանրականությունը, քաղաքացիական կողմնորոշվածությունը, նոր փորձառության ընդունումը, ռիսկի դիմելը:

Ատենախոսության տեսական և կիրառական արժեքը: Հետազոտվող հիմ-նախնդրի շրջանակներում օգտագործվել են սոցիոլոգիական տեսական տար-բեր ուղղությունների պատկանող դասական և հետդասական հեղինակների՝ սովյալ ուլորտում ունեցած ձեռքբերումները:

Առաջին անգամ իրանական արդիականացման գործընթացը համալիր վերլուծության է ենթարկվում կանանց կրթվածության, ներգրավվածության, մասնակցության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի ուսումնասիրման միջո-ցով:

Հեղինակը հետազոտության արդյունքների հիման վրա արել է մի շարք ա-ռաջարկություններ, որոնք միտված են իրանական հասարակության մեջ ար-դիականացման արդյունավետության բարձրացմանը:

Առաջարկվել է իրանական հասարակական համատեքստին ադապտացված արդիականացման մակարդակի չափման մոդել, որը մշակվել է իրանական իրականության մի քանի տասնամյակների փորձի ուսումնասիրման, դրանում դրսևորված տարբեր իրողությունների և պատճառածին գործոնների վերլուծության միջոցով:

Հետազոտության ընթացքում մշակված տեսական նյութը կարող է օգտակար լինել խնդրով հետաքրքրվող այլ հասարակագետներին, ինչպես նաև թեմատիկ հիմք հանդիսանալ տեսության միջին մակարդակի համալսարանական, ակադեմիական դասընթացների պատրաստման համար:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ-ի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Աշխատանքի դրույթները ներկայացվել են Հայաստանում և արտերկրում հրատարակված հոդվածներում, ինչպես նաև մի շարք գիտաժողովներում ու գիտական սեմինարներում, մասնավորապես՝ «Իրանական ընտանիքի հետազոտություններ» գիտական կոնֆերանսում՝ Թեհրանում 2012 թ., «Սոցիալ-մշակութային հետազոտությունները Իրանում» գիտական կոնֆերանսում՝ Թեհրանում 2014 թ., «Սոցիոլոգիայի և սոցիալական գիտությունների 3-րդ տարեկան կոնֆերանսում»՝ Թեհրանում 2015 թ.: Ատենախոսության հիմնադրույթներն ամփոփված են տպագրված յոթ հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք բաղկացած են 8 ենթագլուխներից, եզրակացություններից, ամփոփումից, առաջարկությունների բաժնից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 214 էջ:

ԱՏԵՆԱՊՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, որտեղ առաջին և երկրորդ գլուխներում ներկայացված են արդիականության գործընթացի հետ կապված տարբեր տեսական ըմբռնումներ, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև ուսումնասիրվող հասարակության պատմամշակութային, սոցիալ-ժողովրդագրական պատկերի շուրջ տեսական և հետազոտական տվյալների վերլուծությունների ընդհանրացումներ: Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է արդիականացման թիրախային խմբի հետազոտության միջոցով ստացված արդյունքների վերլուծությանը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝ «Արդիականացման հիմնախնդիրը սոցիոլոգիական տեսություններում»,** բաղկացած է երեք ենթագլուխից, որոնցից առաջինում՝ **«Արդիականացման մեկնաբանությունը դասական սոցիոլոգիական տեսություններում»,** ներկայացված է արդիականացման գործընթացի նկարագ-

րությունը դասական սոցիոլոգիական տեսությունների կողմից: Մի շարք երկրների օրինակով քննարկվում են արդիականացման այս կամ այն մոդելի առանձնահատկությունները, բացահայտվում են արդիականացման նախնական տեսությունների հիմքում ընկած հիմնական ընկալումները, ըստ որոնց՝ արդիականացումը հնարավոր է, այսպես կոչված, հետապնդող զարգացման մոդելի շրջանակներում, որի հիմքում ընկած պատկերացումների համաձայն՝ արդիականացումն իրենից ներկայացնում է արևմտյան հասարակություններին ձգտող նպատակաուղղված շարժում: Արդիականացման մոդելների թվում հեղինակը կարևորում է հատկապես «վեստերնացում» և հետապնդող կամ, այսպես կոչված, «վարակիչ» (catch up) մոդելները: Այնուհետև արդիականացման վարակիչ մոդելի շրջանակներում հեղինակը Ռուսաստանի, Մեքսիկայի, Թուրքիայի պատմական փորձի օրինակով ցույց է տալիս, որ որոշ երկրներ չեն շարժվել «վեստերնացում» մոդելի տրամաբանությամբ և անցել են արդիականացման իրենց ինքնատիպ ճանապարհը:

Այս դեպքում չեն դրսևորվել արևմտյան արդիականացման այնպիսի շրջափուլեր, ինչպիսիք են վերածնունդը, բարեփոխումները, լուսավորչականությունը և այլն: Ենթագլխում հեղինակը գուգահեռներ է անցկացնում ազատականների և պահպանողականների տեսական կողմնորոշումների միջև, անդրադառնում ազատականներից Ռ. Դալի, Գ. Ալմոնդի, Լ. Փայի հայացքներին, որոնք արդիականացումը կապում էին հասարակության մեջ միջին խավի ձևավորման և կրթվածության մակարդակի բարձրացման հետ, որը, նրանց կարծիքով, անխուսափելիորեն որոշ փոփոխությունների է հանգեցնում կառավարման համակարգում:

Հեղինակն այս ենթագլխում անդրադառնում է արդիականացման մեկ այլ նշանավոր հեղինակի՝ արդիականացման գործընթացը դասական էվոլյուցիոնիզմի դիրքերից հետազոտող Շ. Էյզենշտատի աշխատություններին:

Նա արդիականացման գործընթացը դիտում է որպես փուլային զարգացման աստիճանական ընթացք՝ գտնելով, որ այս ուղով առաջնորդվող երկրները պետք է անցնեն արդիականացման նույն փուլերով, որով անցել են արևմտյան զարգացած պետությունները: Արդիականացման վերլուծությունը կառուցվածքային ֆունկցիոնալիզմի տեսանկյունից կապվում է Բ. Հոցելիցի հայացքների հետ, որն արդիականացման գործընթացում առավելապես կենտրոնանում է տեղական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործոնների վրա և գտնում, որ զարգացման հասնելու համար առավել կարևոր են ներքին գործոնները:

Ըստ այդմ, հեղինակը սոցիոլոգիական դասական տարբեր հայեցակարգերի օգնությամբ վերլուծել է արդիականացման գործընթացը, ուսումնասիրել արդիականացման տարբեր մոդելներ և այս լույսի ներքո մեկնաբանել տարբեր երկրների արդիականացման պատմական փորձը՝ վեր հանելով դասական մոտեցումների որոշ սահմանափակումները:

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է «Ոչ դասական արդիականացումը. Արդիականացման տեսությունների վերախմաստավորումը»:

Արդիականացման մեկնաբանման այս դաշտում երևան են գալիս հիմնովին նոր տեսական ըմբռնումներ, որոնք արդիականացումն ուսումնասիրում են սոցիալ-հոգեբանական դիտանկյունից: Այս համատեքստում հեղինակը կարևորում է Ք. Մքքլելլանդի և Ե. Հայգենի աշխատությունները, որոնցում առաջընթացն ու հասարակական փոխակերպումների նախադրյալները փնտրվում են անձնային հոգեբանության և դրա սոցիալական հետևանքների տիրույթում: Մքքլելլանդը ուշադրություն է դարձնում այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են արդիականացման մոտիվացիան սոցիալական-հոգեբանական տեսանկյունից, որն ունի երկու դրույթ՝ անհատական առաքինությունը (նվաճումների ու ձեռքբերումների նկատմամբ հետաքրքրությունը) և սոցիալական առաքինությունը (հետաքրքրությունը ուրիշների բարեկեցության, բարգավաճման նկատմամբ):

Արդիականացման ժամանակակից դպրոցի շրջանակներում հեղինակն անդրադառնում է նաև Է. Գիդդենսի տեսական մոտեցումներին, որտեղ վերջինս լայնամասշտաբ ուսումնասիրությունների միջոցով արդիականացման գործընթացը մեկնաբանելիս կենտրոնանում է այնպիսի ինստիտուտների վրա, ինչպիսիք են ՁԼՄ-ները, վստահությունն ու ընկերությունը, տեխնիկական ու մասնագիտական ուսումնասիրությունները, ինքնաբացահայտումը և հաղորդակցությունը, որոնք դասական և ժամանակակից հասարակություններում ունեն տարբեր որակներ²: Գիդդենսը խոսում է նաև արդիականացման երկակի՝ դրական և բացասական հետևանքների մասին:

Արդիականությամբ պայմանավորված՝ ինստիտուցիոնալ փոխակերպումների դաշտում հեղինակը քննության է առնում նաև պահպանողական տեսաբաններից Ս. Հանտինգտոնի տեսակետը, որի համաձայն՝ արդիականացումն ու զարգացումը հնարավոր են միայն քաղաքական կայունության և կենտրոնաձիգ կուռ վարչարարական մեքենայի առկայության պայմաններում:

Փաստորեն, այս ենթագլխում տրվել է արդիականացման ոչ դասական տեսությունների նկարագրությունը, և ներկայացվել ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական ասպեկտը: Անդրադարձ է կատարվել նաև այն հնարավոր դրական և բացասական հետևանքներին, որոնք կարող են ի հայտ գալ հասարակության տարբեր մակարդակներում:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի մարտահրավերները արդիականացման սոցիոլոգիական մեկնաբանման համատեքստում. սոցիալական զարգացման նոր հարացույց», քննարկվում են արդիականացման տեսաբաններից Դ. Լերների, Ս. Շարմայի, Կ. Վոնգի և այլոց

²Տե՛ս **Giddens A.** Sociology: Introductory Readings, UK (2nd ed.), 2002, P.127

հայացքները: Այստեղ Միջին Արևելքի, Ճապոնիայի, Չինաստանի, Մեքսիկայի, Թուրքիայի պատմական փորձի օրինակովցույց են տրվում արդիականացման այլընտրանքային այն մոդելները, որոնք իրականացել են արդիականացման ոչ արևմտակենտրոն մոդելի մեխանիզմներով: Մասնավորապես, Դ. Լերների համոզմամբ, ի տարբերություն ավանդական մարդու, ժամանակակից անհատը, տիրապետելով տեղեկատվական տարբեր մեխանիզմների, ունենալով գրագիտության առավել բարձր մակարդակ, ավելի պատրաստակամ է արդիականացման պահանջների ընդունման հարցում և մտածողությամբ ավելի է հակված արդիականացմանը: Մ. Շարման իր հերթին քննադատում է այն տեսական մոտեցումները, որտեղ արդիականացումը բացառապես կապվում է տնտեսական գործընթացների հետ: Նա արդիականացման գործընթացում առանձնացնում է ֆիզիկական, սոցիալական, բարոյական, մշակութային հարթությունները: Նոր արդիականացման տեսաբաններից այս գլխում անդրադարձ է կատարվում Ք. Դեյվիսին, որը քննադատում է Մ. Վեբերի հայացքներն առ այն, որ կրոնն է հիմք հանդիսանում այն հոգևոր բնույթների և արժեքային համակարգերի սկզբնավորման, որոնք թափանցում են հասարակության տարբեր հարթություններ: Ի հակադրություն այս տեսակետի՝ Դեյվիսը նշում է, որ կապիտալիզմը նույնպես կարող է հասարակության ներսում ստեղծել հոգևոր որոշ ունակություններ, օրինակ, վճարունակություն գնորդների և վաճառողների համար, արդյունաբերական աշխատողների և ձեռներեցների դեպքում ռիսկի դիմելու պատրաստականություն և այլն: Անդրադառնալով նոր արդիականացման դպրոցի հաջորդ տեսաբան Կ. Ա. Վոնգին՝ հեղինակը ներկայացնում է նախնական արդիականացման տեսական դրույթների շուրջ վերջինիս քննադատական մոտեցումները: Նա գտնում է, որ տարբեր սոցիալական կառույցներ առաջնորդվում են արդիականացման իրենց մոդելով և իրենց մշակած մեթոդներով: Վոնգի հայացքներն ըստ էության հակադրվում են արդիականացման «վեստերնացում» մոդելի սկզբունքներին: Վոնգը ավանդույթը դիտարկում է որպես մի գործոն, որը կարող է նպաստել հասարակությունների զարգացմանը, իսկ տարբեր սոցիալական կառույցները պետք է ուղղորդվեն արդիականացման տարբեր մոդելներով³:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Իրանական հասարակությունում արդիականացման գործընթացների առանձնահատկությունները. պատմասոցիոլոգիական վերլուծություն», բաղկացած է երեք ենթագլխից: Դրանցից առաջինում՝ «Իրանական հասարակությունում արդիականացման կոնցեպտուալիզացիայի հիմնախնդիրը. համալիր սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը», ներկայացված են հետազոտության մեթոդա-

³ See **Wong, K. A., David K. Y. Chu.** Modernization in China: The Case of the Shenzhen Special Economic Zone. Oxford University Press, 1985, P. 74

բանական և մեթոդական այն հիմքերը, որոնք ընտրվել են հիմնախնդրի ուսումնասիրության համար: Տեղեկատվության հավաքման մեթոդները երեքն են՝ փաստաթղթերի ավանդական վերլուծություն, տվյալների երկրորդային վերլուծություն, կիսաձևայնացված հարցազրույց: Նկարագրվել է ընտրված մեթոդների էությունը, հիմնավորվել է դրանց նպատակահարմարությունը, ներկայացվել է ընտրանքային համախմբությունը, բնութագրվել են այն թիրախային խմբերը, որոնք առանձնացվել են կիսաձևայնացված հարցման շրջանակներում, նկարագրվել է հետազոտական փուլերի ընթացակարգը, տրվել է օգտագործված հիմնական հասկացությունների բացատրությունը: Գլխում ներկայացված են նաև հիմնախնդրի օպերացիոնալիզացիան և այդ համակարգում ներառված հիմնական փոփոխականների նկարագրությունը:

Երկրորդ ենթագլխում՝ *«Իրանական հասարակությունում արդիականացման գործընթացների պատմաստղաբանական վերլուծությունը ինստիտուցիոնալ մակարդակում»*, ներկայացվում են Իրանի արդիականացման գործընթացի մի քանի փուլեր՝ իրենց ընթացակարգային առանձնահատկություններով և խնդրականությամբ: Արդիականացման առաջին ալիքի շրջանակներում հեղինակը խոսում է 1963-ին հայտարարված Իրանի զարգացման նոր ուղին, որն առանձնանում է տեխնոկրատական և սոցիալական ուղղվածությամբ: Բարեփոխումների այս ծրագիրը համաժողովրդական հավանություն է ստանում 1963 թ. հունվարի 26-ին անցկացված հանրաքվեում: Չնայած սկզբնական որոշ հաջողությունների և արդիականացման համար բարենպաստ պայմաններին՝ այն չի իրագործվում, և դրա համար նախապատրաստած հենքերը փլուզվում են: Պատճառների շարքում նշվում են սոցիալական կապիտալի թուլացումն ու կառավարության նկատմամբ հասարակական վստահության անկումը, տնտեսական ոլորտի ձախողումները, օլիգարխիկ իշխանական համակարգի ձևավորումը, ռազմական չարդարացված ծախսերը, քաղաքական մրցակցության բացակայությունը:

Արդիականացման երկրորդ ալիքը նշանավորվում է 1978-ին տեղի ունեցած մի շարք փոփոխությունների համախմբով, որի հետևանքով ընդդիմադիր շարժումը հանգեցնում է Շահի կառավարության կազմալուծմանը, և, ի վերջո՝ 1978-ին Իրանի իսլամական հեղափոխությունը հաղթում է՝ տապալելով թագավորական վարչակարգը⁴: Իսլամական հեղափոխությունը նախանշում էր ծագման և ծննդի գործընթաց, սակայն հեղափոխական շարժումն իր երկրորդ փուլում, այսինքն՝ քաղաքացիական հիմունքներ ստեղծելիս, հանդիպում է որոշ խոչընդոտների, որոնցից ամենաէականը Իրան-իրաքյան ութամյա պատերազմն էր: Մրան հաջորդած պատմական իրողությունների թվում նշանավորվում է նաև 1991-1999-ին Իսլամական հեղափոխության խարիզմատիկ իշխա-

⁴ Տե՛ս **Vatankhah M.**, Historical problems in process of development in Iran, Tehran, 2008 ,P. 153

նության կողմից Շիա գաղափարախոսության ընդունումը, ըստ որի՝ իշխանական բուրգի գագաթ է բարձրանում կրոնական հեղինակավոր առաջնորդը:

Վերլուծելով 20-րդ դարի երկրորդ կեսը ներառող՝ Իրանի արդիականացման պատմական փորձը՝ հեղինակը կարևորում է կանանց կրթվածության հանգամանքը, նրանց սոցիալական ակտիվությունը և ներգրավվածությունը հասարակական տարբեր շերտերում, ինչպես նաև ՁԼՄ-ների դերը հասարակության տեղեկացվածության հարցում: Հասարակական փոփոխություններում՝ կրթված և նախաձեռնող կանանց ունեցած դերակատարման առնչությամբ հեղինակն անդրադառնում է իսլամական աշխարհում և հատկապես Իրանում կանանց հասարակական ակտիվության որոշ նախադեպերի: Այս համատեքստում ներկայացվում են նաև 20-րդ դարի 60-ականներից սկիզբ առած ֆեմինիստական շարժումների հաջորդական ալիքները, ոչ միայն որպես կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարժումներ, այլ նաև հասարակական բարեփոխումների հանգեցնող գործընթացներ:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Իրանական հասարակությունում արդիականացման գործընթացների վրա ազդող գործոնների սոցիոլոգիան վերլուծություն», քննվում են «արդիականությունն» ու «արդիականացումը», իրանական արդիականացման հայեցակարգը, արդիականացման սոցիալական նախադրյալներն ու հեռանկարները: Այս բաժնում ուսումնասիրվել և ներկայացվել են նաև Իրանում քաղաքական, տնտեսական և մշակութային արդիականացման գործընթացների հետ կապված ցուցանիշները: Համառոտ անդրադարձ է կատարվել նաև կրոնական ժողովրդավարության աստիճանի և Իրանում տեղային արդիականացման հիմնահարցերին, ուսումնասիրվել է կրոնական իշխանության ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա: Հեղինակն անդրադառնում է Դ. Նամինի հայեցակարգին, որտեղ վերջինս առանձնացնում է իրանական արդիականության երեք ասպեկտ. առաջինը քաղաքական մոդեռնիզմն է, երկրորդը՝ մշակութայինը, և երրորդը՝ տնտեսականը: Նամին գտնում էր, որ արդիականացման երևույթը չպետք է ներմուծվի դրսից, այլ պետք է զարգանա տվյալ հասարակության ներսում և այդ ճանապարհով դրական տեղաշարժեր առաջացնի մարդկանց կենսակերպում⁵:

Ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև Մուսա Ղանի Նեջադի մոտեցմանը, որում առաջ է քաշվում այն հիմնական գաղափարը, որ կառավարության բռնակալության հանդուրժումը կախված է բնակչության ցածր գիտելիքներ ունենալու հանգամանքով, և հետևաբար արդիականության ու արդիականացման սահմանները հնարավոր կլինի ընդլայնել գիտելիքի տարածման միջոցով⁶: Այս համատեքստում հատկանշվում է նաև մեկ այլ հեղինակի՝ Թադի Ա-

⁵ Տե՛ս **Nami D.**, Social sciences: Modernization and Iranian culture, (2nd ed.) Tehran, 2009, P. 287

⁶ Տե՛ս **Azad Armaki T.**, Iranian modernity, Tehran, 2012, P. 209

զաղ Արմաքիի հետազոտությունը, որտեղ նա փորձում է հստակ սահմանել իրանական հասարակության ընդհանուր պատկերը: Ըստ նրա տեսակետի իրանական արդիականացումն արդյունք է սոցիալական երեք հիմքերի (կրոն, քաղաքականություն, ընտանիք) փոխառնչության: Ի դեմս իրանական արդիականացման՝ նա տեսնում էր համակցված մի երևույթ, ձեռք բերված ակտուալ, օբյեկտիվ, մենթալ դեպք, թեև վատ ձևավորված, բայց և այնպես ձևավորված իրողություն: Իրանական արդիականացման խաթարումների պատճառների թվում նա նշում է հասարակական կրկնվող ճգնաժամերը, անորոշությունն ու թուլությունը:

Արդիականացման հիմնախնդիրը գլխավորապես դիտարկում են միջին մակարդակում, ուստի հաշվի են առնվում այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են ընտանիքը, կրոնը, քաղաքական համակարգը: Իրականացնելով Իրանում անցկացված սոցիոլոգիական մի շարք հետազոտությունների տվյալների երկրորդային վերլուծություն՝ ատենախոսը գալիս է այն եզրահանգմանը, որ իրանական հասարակության մեջ արդիականացման հիմնական ազենտները բարձրագույն կրթություն ստացող երիտասարդ կանայք են:

Երրորդ գլխի՝ «Արդի իրանական հասարակության միկրոմակարդակում արդիականացման սոցիալական նախադրյալների սոցիոլոգիական վերլուծություն», առաջին ենթագլուխում, որը վերնագրված է «Արդի իրանական հասարակությունում արդիականացման հիմնական ազենտ հանդիսացող խմբի ընդհանուր նկարագիրը», ներկայացված են Փիրոսոնի, X² (ChiSquare) թեստերի կիրառության արդյունքները ցույց տալու համար կախյալ և անկախ փոփոխականների միջև առկա կապի էությունը:

Թիրախային խմբի բնութագրումից հետո հեղինակն անդրադառնում է արդիականության կենտրոնական ցուցանիշին, որը հետազոտության հիմնական փոփոխականն է և չափվել է Լայկերտի 5-միավորանոց սանդղակների գումարման միջոցով: Նախ այս ցուցանիշի դեպքում հաշվի են առնվել 56 միավորներ, որոնք Քրոնբախի վիճակագրական «ալֆա թեստ»-ի օգտագործմամբ ջնջվել են ստուգումից հետո: Քանի որ արդիականության ցուցանիշն ունի 9 ցուցիչ, ուստի վիճակագրական տվյալները հաշվարկվել և մշակվել է 5 մասից բաղկացած սանդղակ: Այս փուլում առաձևացվել և ուսումնասիրվել են մի շարք փոփոխականներ. *Կողմնորոշումը դեպի առաջադիմություն:* Ինչպես ցույց են տվել հետազոտության արդյունքում ստացված տվյալները, հարցվածներից 13 անձինք (5%) ունեն ցածր առաջադիմություն, 115 հոգի (44.2%)՝ առաջադիմության միջին մակարդակ, 113 անձինք (43.5%)՝ բարձր առաջընթաց և 19 անձինք՝ առաջադիմության շատ բարձր ցուցանիշ (7.3%): *Գիտակցականությունը:* Համաձայն ստացված տվյալների՝ հարցվածների 70.8%-ն ունի գիտակցականության բարձր մակարդակ, մնացած 29.2-ը՝ միջին կամ ցածր մակարդակ: *Անկախությունը:* Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ հարցվածնե-

րից 20%-ի ըմբռնումներում սեփական անկախության մակարդակը շատ բարձր է, 45,8%-ն ունի անկախության բարձր մակարդակ, 25%-ը՝ միջին, իսկ 9,2%-ը ցածր: *Էգալիտարությունը*: Ըստ գրանցված ցուցանիշների՝ հարցվածների 22,7 %-ը գտնվում է շատ բարձր էգալիտարության մակարդակում, 57,3 %-ը՝ բարձր, իսկ 20%-ը՝ միջին մակարդակում: *Ժողովրդավարության գործակից*: Ըստ արդյունքների վերլուծության՝ հարցվածների 60,8%-ը ժողովրդավարացման ամենաբարձր մակարդակի վրա է, իսկ 24,6%-ը՝ բարձր մակարդակի, մնացած 14,6%-ի մոտ գրանցվել է միջին և ցածր մակարդակ: Հետաքրքրական է այն, որ ժողովրդավարացման շատ ցածր մակարդակի վրա գտնվող որևէ հարցվող չի եղել: *Բնդիվիդուալիզմ*: Ընդհանուր առմամբ հարցվածների 85,4%-ը գտնվում է բարձր և ավելի բարձր մակարդակում՝ ըստ այս ցուցանիշի, և, հակառակը, միայն 2,7 %-ն է գտնվում ցածր մակարդակում, մնացածը միջին մակարդակում են:

Համընդհանրականությունը (ունիվերսալիզմ): Դատելով ստացված տվյալներից՝ հարցվածների 61,1%-ը գտնում է, որ իրենց երկրի քաղաքացիները, նրանք, ովքեր խոսում են միևնույն լեզվով, նախապատվություն չեն տալիս ուրիշներին իրենց հասարակության մեջ: Իսկ 26,5%-ն արտահայտում է այդ նախապատվությունը: *Քաղաքացիական կողմնորոշվածություն*: Տվյալների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ հարցվածների 76,1%-ը քաղաքացիական կողմնորոշվածության ինդեքսով բարձր և ավելի բարձր մակարդակներում է, իսկ 20%-ը՝ միջին մակարդակում, և ընդամենը 3,9%-ը ցածր մակարդակում է: *Նոր փորձառության ընդունումը*: Այս փոփոխականի վերաբերյալ ստացված տվյալներից երևում է, որ 96,2%-ը՝ պատրաստ է ընդունելու նոր փորձառությունները և ընդամենը մեկ անձ է /0,4%/ գտնվում նոր փորձառությունների ընդունման ցածր մակարդակում: Մարդկանց 3,5%-ը միջին մակարդակում է: *Ռիսկի դիմելու գործոնը*: Համաձայն հետազոտության արդյունքների հարցվածների 39,2 %-ը ռիսկի դիմելու հակվածության ցուցանիշով ցածր մակարդակում է, իսկ 20 %-ը՝ բարձրում: Ամենաբարձր հաճախականությունը նկատվում է միջին մակարդակում, որը կազմում է 40,8%:

Հետազոտության արդյունքում պարզվել են հետևյալ օրինաչափությունները: Արդիականացման հիմնական ագենտ հանդիսացող բարձրագույն կրթությունը ստացող կանանց թիրախային խումբը բնութագրվում է հիմնականում միջին և բարձր արդիականության աստիճանով: Բնութագրելով խումբն ըստ կրթական մակարդակի կարող է նշել, որ այդտեղ առավել ներկայացված են բակալավրիատում սովորող կանայք՝ հումանիտար մասնագիտացվածության որոշ առավելությամբ: ՋԼՄ-ներից օգտվելու աստիճանը նշանակալի գործոն չէ արդիականության մակարդակի վրա ունեցած իր ազդեցությամբ: Արդիականության աստիճանի վրա զգալի ազդեցություն ունի կրթության մակարդակը. որքան կանանց կրթական մակարդակը բարձր է, այնքան արդիականության աստիճանն ավելի բարձր է: Արդիականացման վրա ազդող նշանակա-

լի գործոնը կնոջ սոցիալ-սնտեսական կարգավիճակն է: Հարցվողների քաղաքային և գյուղական ծագման ազդեցությունն արդիականացման աստիճանի վրա նշանակալի չէ:

Հաջորդ հետաքրքրական արդյունքն այն է, որ չի գրանցվել նշանակալի կախվածություն սոցիալական մասնակցության (դրանք են՝ սպորտ, կրթական, քաղաքական կյանքին մասնակցություն և մասնագիտական միություններում ընդգրկվածություն) և արդիականության աստիճանի փոփոխականների միջև:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Արդի իրանական հասարակությունում արդիականացման հիմնական ազեկտ հանդիսացող խմբի արդիականացման մակարդակի վրա ազդող հիմնական գործոնների սոցիոլոգիական վերլուծություն», ներկայացված են պատճառահետևանքային կապերը բազմաչափ ռեգրեսիոն վերլուծության մեթոդի օգնությամբ: Ի թիվս տարբեր մեթոդների այս հետազոտության մեջ տեղ գտած փոփոխականների համար օգտագործվել է փուլային (step by step) մեթոդը, ուստի փոփոխականներն ուսումնասիրվել են երկու ընդհանուր դասակարգմամբ: Առաջին դասը ժողովրդագրական այնպիսի փոփոխականներն են, ինչպիսիք են տարիքը, քաղաքային կամ գյուղական ծագումը, ուսումնառության ժամկետը, կրթության ոլորտն ու աստիճանը: Իսկ երկրորդ դասը սոցիալական փոփոխականներն են, որոնք ներառում են ՋԼՄ-ներից օգտվելու աստիճանը, սոցիալական ակտիվության աստիճանը և սոցիալական կարգավիճակը: Ռեգրեսիոն մոդելի կիրառման շրջանակներում ստուգվել են սոցիալական ակտիվության, տարիքի, ուսումնառության ժամկետի, կրթության աստիճանի և ոլորտի, քաղաքային և գյուղական ծագման փոփոխականների միջև առկա փոխհարաբերությունները: Մոդելի կիրառմամբ ցույց է տրվել, որ տարիքը և ակտիվության տոկոսաչափն ունեն հակադիր փոխհարաբերություն, և տարիքի աճի հետ սոցիալական ակտիվությունը նվազում է և, հակառակը, մինչդեռ քաղաքային ծագման և սոցիալական ակտիվության փոխառնչությունը հակառակ միտումն է գրանցում, այսինքն՝ քաղաքային ծագումը դիտվում է սոցիալական ակտիվության նախադրյալների շարքում:

Հետազոտության շնորհիվ պարզվել է նաև, որ ՋԼՄ-ներից օգտվելու, հարցվողների տարիքի, քաղաքային ու գյուղական ծագման փոփոխականները փոխադարձ կապ ունեն հասարակական մասնակցության աստիճանի հետ: Տարիքի ավելացումը նվազեցնում է մասնակցությունը: Ռեգրեսիոն մոդելի միջոցով վերլուծության է ենթարկվել սոցիալական փոփոխականների հարաբերական ակտիվությունը՝ ըստ ՋԼՄ-ների օգտագործման հաճախականության: Այս համատեքստում պարզվել է, որ ՋԼՄ-ների օգտագործման աճի հետ զուգահեռ՝ մեծանում է նաև սոցիալական ակտիվությունը, իսկ ՋԼՄ-ների օգտագործման նվազեցմանը համընթաց՝ նվազում նաև սոցիալական ակտիվությունը: Վերլուծվել է ժողովրդագրական փոփոխականների փոխհարաբերությունները՝ ՋԼՄ-ների օգտագործման փոփոխականի հետ: Ըստ այդմ ստացվել է, որ ՋԼՄ-

ներից ավելի շատ են օգտվում ավելի բարձր կարգավիճակ ունեցող կանայք. ինչքանով բարձր է կնոջ կրթությունը, այնքանով նա ավելի քիչ է օգտվում ՁԼՄ-ներից, ցույց է տրվել նաև, որ ուսումնառության ժամկետի երկարաձգման աճին զուգահեռ՝ ՁԼՄ-ների օգտագործման տոկոսաչափը նվազում է: Քաղաքային ծագում ունեցող մարդն ավելի շատ մասնակցություն ունի սոցիալական ակտիվության մեջ, ՁԼՄ-ներից օգտվելու տևողության աճը բարձրացնում է սոցիալական մասնակցության աստիճանը: Կրթության տևողության փոփոխականը հակադարձ կապի մեջ է ՁԼՄ-ներից օգտվելու աստիճանի և սոցիալ-տնտեսական դիրքի հետ, թեև ՁԼՄ-ներից օգտվելու հանգամանքն անմիջականորեն չի ազդում արդիականացման մակարդակի վրա:

Ատենախոսության **եզրակացություններում** ներկայացված են զանգվածային հարցումներից արված եզրակացություններ: Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ արդիականացման միջուկը կազմում են բարձրագույն կրթություն ստացող բարձր սոցիալական կարգավիճակ ունեցող կանայք: **«Ամփոփում»** բաժնում տեղ են գտել ատենախոսության մեջ ներկայացված ամբողջ համալիր սոցիոլոգիական հետազոտության արդյունքում արված ընդհանուր եզրակացությունները:

Ամփոփելով հետազոտության տվյալները՝ կարելի է հաստատել, որ իրանական արդիականացումը իր տեղային առանձնահատկություններով հնարավոր չէ տեղադրել արդիականացման դասական տեսական մոտեցումների շրջանակներում, ըստ այդմ՝ այն հիմք է տալիս խոսելու արդիականացման իրանական ազգային մոդելի մասին: Հասարակության մակրոմակարդակում արդիականության նախադրյալները ոչ միայն համակարգված չեն, այլև մասնատված են: Հասարակության միջին մակարդակում արդիականացման հիմնական ազենտ է իրանական ընտանիքը, թեև ընտանիքը նաև ավանդույթների պահպանման ինստիտուտ է:

Իրանական արդիականացման հիմնական ազենտ են բարձրագույն կրթություն ստացող երիտասարդ կանայք:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

Հոդվածներ.

1. **Շարիֆի Յագոբի, Ա.,** Կրթության դերը ընտանիքի տնտեսական բարօրության հարցում// Կրթություն և դաստիարակություն, Թեհրան, N 4, ձմեռ, 2006, էջ 57-74:

2. **Շարիֆի Յագոբի, Ա.** Իրանական ընտանիքներում առկա խնդիրների բացահայտումն ու դասակարգումը // Ընտանիք և հետազոտություն, Թեհրան, N 1, աշուն, 2007, էջ 36-54:

3. **Շարիֆի Յազդի, Ա.**, Երեխաների և ծնողների դաստիարակչական հիմնախնդիրներն ու դրանց դրական և բացասական հետևանքները, «Ընտանիք և հետազոտություն» // N 4 ամսառ, Թեհրան, 2008, էջ 91-103:

4. **Sharifi Yazdi, Alireza**, Modernism in thought among girl students of Tehran Universities // Journal of American Science 8(6), USA, 2012, P. 271-279.

5. **Շարիֆի Յազդի, Ա., Զապավսկայա, Մ.**, The study of the Effective Social Activity of Women in Iran, ՀՀ Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները // Գիտական հոդվածների ժողովածու, 1(21), Երևան, 2014, էջ 259-269:

6. **Շարիֆի Յազդի, Ա., Զապավսկայա, Մ.**, Position and share of urban women in distribution of power in family, ՀՀ Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները // Գիտական հոդվածների ժողովածու, 1(21), Երևան, 2014, էջ 269-280:

7. **Շարիֆի Յազդի, Ա., Զապավսկայա, Մ.**, Բրանական հասարակության արդիականացման մոդելի առանձնահատկությունները ժամանակակից արդիականացման մոտեցումների համատեքստում// Կանթեդ, 4 (61), Երևան, 2014, էջ 230-239:

Մենագրություններ.

1. **Շարիֆի Յազդի, Ա.**, Հետազոտությունների ժողովածու (առաջին հատոր), Թեհրան, Գյանջինեհ հրատ., 2006, 313 էջ:

2. **Շարիֆի Յազդի, Ա.**, Հետազոտությունների ժողովածու (երկրորդ հատոր), Թեհրան, Ֆանուս հրատ., 2010, 287 էջ:

3. **Շարիֆի Յազդի, Ա.**, Կրթության և դաստիարակության սոցիալ-վերլուծական պատմությունը Քերման նահանգում, Քերման, Ավթաբ հրատ., 2008, 1179 էջ:

Алиреза Шарифи Язди
Социальные предпосылки модернизации Иранского общества
Резюме

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.03 – “Теории среднего уровня, социальные структуры, социальные институты и процессы”. Защита диссертации состоится 6-ого ноября 2015 г. в 15.00 часов на заседании действующего в ЕГУ специализированного совета 013 ВАК РА по адресу: 0025, Ереван, Абовяна 52 а, ЕГУ

Начиная со второй половины XX-го века проблема модернизации в Иране признана как одна из важнейших проблем в контексте эффективного общественного развития, как одна предпосылок, обеспечивающих целостность институциональных трансформаций в обществе. Модернизационные изменения находят свои проявления в различных сферах иранского общества, в частности, в политических, экономических, социально-культурных. Однако, судя по результатам модернизационного процесса в Иране в течение последних десятилетий можно сделать вывод, что они весьма далеки от желаемых.

Более того, процесс модернизации в Иране характеризуется определенной волнообразностью и стихийностью, и во многом приводит к непредсказуемым результатам. Если учесть также и ряд некоторых исторически неблагоприятных обстоятельств (таких как, например, Ирано-Иракская война), то картина еще более усложняется. Кризисы, проявляющиеся вследствие этих обстоятельств, не только не способствуют эффективной адаптации общества к современным процессам глобализации, но и, с другой стороны, вызывают определенные противоречия в иранском обществе и обостряют ощущение неопределенности в общественном сознании.

В связи с этим, были проведены многократные исследования особенностей процесса модернизации и тех проблемных ситуаций, которые проявляются в иранском обществе в результате этих трансформаций. Тем не менее, глубокое и многостороннее изучение иранского опыта модернизации, и разработка продуктивной объяснительной модели процесса иранской модернизации, не перестает оставаться в центре научного дискурса.

Научная новизна данного исследования заключается в том, что автор в контексте модернизации выделил и изучил такие факторы, которые не были удостоены должного внимания со стороны исследователей: в частности, автором была изучена вовлеченность и степень участия женщин в разных общественных институтах в контексте модернизационных процессов, а также особенности их роли в модернизационных процессах. С точки зрения приоритетных прикладных результатов исследования следует подчеркнуть, что в результате исследований автор предложил адаптированную модель измерения уровня модернизации в контексте иранского общества, которая была разработана посредством анализа исследования нескольких десятилетий иранской истории, анализа реалий и различных причинных факторов, проявляющихся в историческом развитии иранского общества.

В первой главе, которая озаглавлена "Проблема модернизации в социологических теориях", рассмотрены и проанализированы социологические теории, интерпретирующие процесс модернизации, рассмотрены теоретические подходы в свете классической и постклассической теории модернизации; проблематика модернизации анализируется в контексте теоретической дискуссии консервативных и либеральных авторов, также проанализированы работы авторов новой социологической школы модернизации. Во второй главе, которая называется «Особенности процесса модернизации в иранском обществе: историко-социологический анализ», исследуются и анализируются предпосылки возникновения процесса модернизации в иранском обществе в историческом ракурсе, а также последующие исторические проявления данного процесса, предпосылки существующей модернизации в нынешнем иранском обществе на трех основных уровнях: микро (индивидуальный), мезо (институциональный) и макро (всего общества в целом). В третьей главе, которая называется «Социологический анализ социальных предпосылок модернизации на микроуровне современного иранского общества», представлены результаты социологического исследования и анализ влияния различных факторов на процессы иранской модернизации.

Результаты исследования свидетельствуют о том, что существует особая модель иранской модернизации, которая отличается от аналогов западной модернизации и, следовательно, не реализуется в рамках общих классических теорий. Автор выявил целый ряд особенностей иранской модели модернизации, показав разрозненность и отсутствие системности предпосылок модернизации на макроуровне. Более того, автор показал практическое отсутствие дискурса модернизации в иранском обществе. Автор показал, что на мезоуровне основой процесса модернизации является институт семьи. Автор показывает, что иранская модернизация является органической и реализуется в основном на микроуровне, с помощью определенных агентов модернизации. Автор обосновал, что основными агентами модернизации в иранском обществе являются молодые женщины, получающие высшее образование. Автор вывел основные социальные характеристики социальной группы, являющейся основным агентом модернизации в Иране, которые дают основание утверждать, что ядро группы составляют молодые женщины, имеющие высокий уровень образования и занимающие высокий социальный статус.

Результаты исследования свидетельствуют о том, что важные факторы, которые могут способствовать модернизации – это разностороннее обучение и переподготовка населения, повышение уровня образования и информирования, их доступность и степень их выраженности. Результаты исследования свидетельствуют о том, что на разных уровнях общества нужно поощрять повышение уровня образования, особенно нужно обратить внимание на улучшение условий, способствующих образованию женщин; также немаловажным фактором является информирование населения о формальном и неформальном видах образования, ставя акцент на подчеркивании важности образовательного процесса в обществе. В контексте разработки информационных программ СМИ необходимо выделить особое место для распространения дискурса модернизации.

Alireza Sharifi Yazdi
The social preconditions of the modernization of the Iranian society
Summery

Dissertation for the degree of PhD in sociological science under the speciality 22.00.03 – “Middle level theories, social structures, social institutions and processes”. The defense will take place on the 6th of November, 2015, at 15:00 the meeting of the Special Board N 013 HAC RA, acting at the Yerevan State University, address: 52 a Abovyan street, 0025 Yerevan, Armenia

The problem of modernization in Iran is outlined as one of the most important problems from the second half of 20th century, which related to the effective development of the country through continuity of institutional transformations in society. Modernization changes occur in different spheres of Iranian society, they are reflected in political, economical, cultural and social life of Iran. However, according to the process of the last decades the actual results of modernization of Iran can be estimated as far from being good enough.

On the other side, the waves of modernization are chaotic and diverse and they often lead to unpredictable results. In addition to all above mentioned, there are some obstacles for the process of modernization, e.g. the war between Iran and Iraq, and the picture is becomes even more complicated. Such kind of critical situation not only stagnates the effective adaptation of Iranian society in processes of globalization, but also arouses certain contradictions in Iranian society and exacerbates the feeling of uncertainty in the public mind.

Thus, in relation to the above mentioned, the different researches were made on the peculiarities of the process of modernization and on the problem causing situation, which exist in Iranian society as a result of these transformations. However, a deep and multilateral study of the Iranian experience of modernization and development of the productive explanatory model of Iranian modernization does not cease to be at the center of scientific discourse.

The scientific novelty of this research is the fact that the researcher studies and reveals in the context of modernization such aspects, which were not stressed enough. From this point of view it is very important to reveal the level of women’s participation and contribution to different social institutions and their role and statuses peculiarities in society. In the process of finding priorities on the way of applied decisions the researcher proposed an adapted model of measuring of modernization level regarding Iranian social context. This model is cultivated in the process of Iranian historic experience of last decades which is reflected through the analysis of the events and determinate issues.

The thesis consists of three chapters.

The first chapter, which is entitled “The problem of modernization in sociological theories”, presents different sociological theories explaining the issue of modernization, some classical and postclassical receptions are described in the context of discourse of conservative and liberal authors’ theoretical background and a review to the research works of authors of a new sociological school of modernization is made.

In the second chapter, which is entitled “Peculiarities of modernization process in Iranian society: historical-sociological analysis”, methodological and methodical bases

of the research are presented, the choice of the research methods and sampling are described and the purpose of the research and the problems of it are presented. In this chapter the researcher analyses the preconditions of the establishment of the process of modernization and further on historical reflections along with the preconditions of modernization in current Iranian society on institutional and macro levels.

In the third chapter, which is entitled “Sociological analysis of the social preconditions of modernization in contemporary Iranian society's micro-level”, the researcher finalizes the results of received data and presents the measure of influence of different factors on the processes of modernization, as well as the description of the group which is considered to be the modernization main modernization agent.

The results of the research prove that there is a special model of Iranian modernization, which is different from the western model of modernization and consequently it is out of the frames of classical models. The most important aspects, which can contribute to the modernization and modernity are different types of teaching and training of population and its educational and informational level, as well as the degree of availability of education in this society. Educational level has a great influence on the degree of modernization: the higher is the women’s educational level, the higher is the level of modernization. Consequently, the target group of women with higher education degrees is considered as the main agent and this group is described to be the one having higher modernization degree.

The results of the research prove that the development of the educational level should be encouraged at different levels, a special attention should be paid to the development of the conditions for women’s education and it is very important to provide the society with the information about educational formal and informal strategies using different mass media mechanism and to stress their importance. An important place in the mass media context should be given to the widening modernization discourse. It is important to stress the attention on the modernization and its items especially in the circle of students.

